

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԵԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գիտական գրականութիւն.—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Նամակ Հին-Նախնային. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խմբագրան կտակի
մրցանակաբաշխութեան հանդէսը. Արտաքին լու-
րեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱ-
ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարիզից:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

II

Ամեն օր ամեն կողմից անվերջանալի
գանգատներ են լսվում, որ մեր ժողովուրդը
զուրկ է փոքր ի շատէ գիտական և
լուրջ հասկացողութիւններից, որ մեր
ժողովուրդը փոխանակ գիտական բար
վերաբերելու դէպի այս և այն երևոյթները,
միայն հաւատում է, որ մեր ժողովուր-
դը, մինչև շինքը խրված է նախապա-
շարժութիւնների մէջ, և այդ հրէշաւոր
նախապաշարմունքների շնորհով մեծ վը-
նաներ է կրում, որ վերջապէս մեր ժո-
ղովուրդի մէջ չեն տարածվում գիտութեան
ձեռքով մշակված հայեացքները հասարա-
կական-ընկերական կեանքի վերաբերմամբ,
և նա զուրկ է տնտեսագիտական,
բժշկական և ուրիշ այնպիսի գիտելիք-
ներից, որոնցով կարողանար օգտվել իր
կեանքի մէջ, որոնցով կարողանար զուրս
գալ իր նեղ, և անխափան լինող վիճակից:
Այդ տեսակ գանգատները անվերջանալի
են:

Սակայն այդպիսի գանգատներից ոչինչ
գրական օգուտ, ի հարկէ, չունի, քան չէ
կարող, և միակ միջոցը, որով կարելի է ցրել
ժողովուրդի մէջ արմատացած նախապաշար-
մունքները, և մոցնել նրա մէջ զանազան
նոր գիտելիքներ և նոր հասկացողութիւն-
ներ, այդ գիտութիւնն է, որը երբեք
սխալ հետեւանքների չէ կարող հասցնել
իսկ ժողովուրդի մեծամասնութեան մէջ գի-
տութիւն մոցնելու, գիտութեան տարե-
քը տարածելու ամենակարգ ճանապարհնե-
րից մէջը: Ժողովուրդական գիտական
գրքերն են, կամ ուրիշ խօսքով գիտա-
կան գրականութիւնն է, որից մենք
այժմ զուրկ ենք, բայց որը անհրաժեշտա-

բար պէտք է մեր գրականութեան մէջ
ստեղծվի և ծաղկեցնվի: Մենք մի քանի
օրինակներ կը բերենք մեր միտքը աւելի
շօշափելի կացուցանելու համար:
Երբ մի տարի հեղեղները և յորդառատ
անձրևները փչացնում են գիւղացու ցանքը,
աւերում են նրա արտերը, նա այդ բոլորը
Աստուածային պատիժ համարելով, իսկոյն
սրբերին է դիմում, և թափօրներ է կատա-
րում: Կամ երբ մի տարի երաշտը սպառ-
նում է ոչնչացնել ազգայնականութեան հուն-
ձը և նրան սովի ենթարկել—նոյն տղէտ
ժողովուրդը, զոհեր է անում, պատարագ
է մատուցանում և ողորմութիւն է խնդ-
րում երկրից: Արդ, ինչպէս կարելի է
արմատախիլ անել ժողովուրդի այդ տեսակ
փոխափոխ և յիմար հասկացողութիւնները,
եթէ ոչ ծանօթացնելով նրան այն բանի
հետ, թէ ինչ է անձրևը, թէ ինչ է ե-
րաշտը, թէ ինչ է կարկուտը, որից
յետոյ միայն այդ նոյն տղէտ ժողովուրդը
ինքն իրան կը համոզվի, որ ոչխարներ ու
կոնքեր մատաղ անելով և թափօրներ կա-
տարելով ոչինչ չէ կարելի անել կարկու-
տի կամ երաշտի դէմ...
Մի ուրիշ օրինակ. մերիսը դայիս փչաց-
նում է հունձը.—գիւղացին ձեռքերը ծա-
լած սպասում է, թէ ինչով կը վերջանայ
այդ «Աստուծոյ ուղարկած պատիժը»: Հո-
ղը, սպասում է լինելով, ոյլ ևս չաւ բերք
չէ տալիս. դիւղացին այդ էլ նախախնա-
մութեան կարգադրութիւն է համարում:
Ֆիլիսոփայական գալիս փչացնում է խաղաղ-
գիւղացին այն էլ իր «մեղքերը» շատանա-
լու: Հետեւանք է համարում: Երկրից ու-
րոտում է արտոյն և կայծակից սարսափա-
հար գեղջիկն է մամը ձեռքին կկեցնելի
է շատապում: «սուրբերի բարկութիւնը»
իջնցնելու համար.—Արդ, որն է աւելի նպա-
տակարար միջոց, խրատել թէ այդ բոլոր-
ըր անմիջ նախապաշարմունքն է թէ ժողո-
վրդի ձեռքը զբոսը տալով տարածել նրա
մէջ գիտական տեղեկութիւններ հասկացնել
թէ ինչ է հողը, ինչպէս է սպասվում հողը,
ինչ է ֆիլիսոփայական, ինչ է մերիսը, կայ-
ծակը, որտեղ և այլն, որից յետոյ ինքն ի-
րան արդէն կը փոխվին ժողովուրդի հասկա-
ցողութիւնները...:

Ելի մի օրինակ. այս և այն տեղում ե-
րևում է տարափոխի հիւանդութիւն,
մարդիկ փոխանակ զգուշութեան միջոց-
ներ ձեռք առնելու, մէկը միւսին մը-
խիթարելու ցանկութեամբ, այցելում են
հիւանդ տները, և հիւանդութիւնը աւելի
տարածում, այն համոզմամբ, թէ «եթէ
մարդու ճակատին դրած է որ չի մեռնի,—
չի մեռնի»:—Եւ ուրիշ ինչ միջոցով կարելի
է այդ բանի առաջն առնել, եթէ ոչ տարա-
ծելով ժողովուրդի մէջ բժշկական գրքեր և
հասկացնելով թէ ինչ է հիւանդութիւնը,
ի՞նչ է տարափոխի ցուր, ի՞նչ է առող-
ջագահութիւնը, որից յետոյ «ճակատին
դրած» ինքն իրան օղը կը ցնդի... և
այլն և այլն:

Աւելի մանրամասնութիւնների մէջ չենք
մտնում, որովհետեւ այդ մեզ շատ հեռու
կը տանէր, և ամփոփում ենք մեր միտքը,
կրկնելով որ ոչ մի միջոց այնքան զօրեղ
չէ կարող լինել ժողովուրդի ամեն տեսակ
սխալ հասկացողութիւնները ուղղելու գոր-
ծում, որքան այն միջոցը, որի նպատակն
է ծանօթացնել անհասկանալի և ամբողջ
ժողովուրդին գիտութեան միջոցով շրջա-
կապառող բնութեան և նրան զեկալարող
օրէնքների հետ, բաց անելով մի ամբողջ
ժողովուրդի աչքերը, և ցոյց տալով, որ աշ-
խարհս չէ զեկալարվում հաւատով, որ
մարդկային աղը չէ կառավարվում ճա-
կատագրի պորութեամբ և այն հա-
յեացքներով, որոնք դարեւրդ ի վեր
թաղաւորելով այս և այն ժողովուրդի մէջ,
թող չեն տալիս նրան մաքի և զաղափա-
րի աւելի լայն հորիզոն ունենալու, և բու-
րանելու, որ մարդը ուրիշ տեսակ էլ կա-
րող է ապրել, և որ աղքատ լինելը,
կամ ճշմարտ միայն, և կամ թշուառու-
թիւնը նախասահմանված բաներ չեն մարդ-
կային ցեղի մի կամ միւս մասի համար...
Այդ նպատակին տանող ճանապարհ-
հը, կրկնում ենք, գիտութիւնն է, որը
ամենագործող մի միջոց է մաքի յեղա-
փոխութիւն առաջ բերելու ժողովուրդի
նոյն իսկ ամենախաւար խաւերի մէջ: Եւ
որպէս զի գիտութիւնը իր այդ մեծ
գերը կատարել մի ժողովուրդի մէջ, հարկա-
ւոր է, որ նա, այդ գիտութիւնը, զուրս

զայ կարին է տնկել, և մոտիկ կենդանի
ժողովուրդի կեանքի մէջ, հարկաւոր է որ
այդ գիտութիւնը, և նրա արդիւնաբերած
ճշմարտութիւնները չը մնան իբրեւ մի ter-
ra incognita ամբողջ ժողովուրդի գրաւա-
նութեան համար, որը, այսպէս թէ
այնպէս, կոչված է ծառայելու մի ամբողջ
ժողովուրդի մտքին և առաջադիմութեանը:

Ահա թէ ինչու գիտական գրակա-
նութեան ձեռքը մի ամենակարեւոր ան-
հրաժեշտութիւն պէտք է համարվի ընդ-
հանրապէս հայոց գրականութեան հա-
մար, որից նա անց ետևում զուրկ է
եղել, որից զուրկ է և այսօր 8անկա-
նալով որ գիտական գրականութիւնը
գէթ մօտիկ ապագայում իր պատշաճաւոր
տեղը բռնի մեր գրականութեան մէջ,
մենք վերջացնում ենք, կրկնելով անցեալ
անգամ ասած մեր հետեւեալ խօսքերը.
«Գիտութիւնը ոյժ է և մատակարարելով մի
անհատին կամ մի ժողովուրդին գիտութիւն,
կը նշանակէ նրա ձեռքը մի նոր ոյժ տալ
կեանքը հարկելու և առաջ գնալու հա-
մար, այն էլ մի այնպիսի ոյժ, որը երբեք
չէ խորտակվում, չէ ընկճվում, այլ միշտ
ինքն է խորտակվում և ընկճում այն բոլոր
խոչնդոտները, արդեքները և սնահաւատու-
թիւնները, որոնք կապում են ժողովուրդին
անշարժութեան շղթաներով, լցնում նրա
սիրտը յուսահատութեամբ, իսկ զուրկը
բխացնող նախապաշարմունքներով»...
Խ. Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿ ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՑ

Յուլիսի 8-ին

Մեր քաղաքի օրվայ հարցերն են տեղական
միդասեան երկու ծխական ուսումնարանը
դարձնել երկրասեան և Ս. Երրորդութեան անու-
նով նոր եկեղեցի կառուցանել: Երկու խնդիրնե-
րն ևս տեղական հասարակութեան համար ուշադ-
րութեան արժանի են: Այս խնդիրները լուծելու
համար տեղացիները երկու անգամ ժողով են հը-
րաւորել, առաջին ժողովը չը կայացաւ շաբաթի

Այդ պալլիսիոնից ոչ հեռու «Crédit Lyonnais»
ընկերութիւնը բացել է ցուցահանդիսի այցելու-
ների յարմարութեան համար իր բանկային գրա-
սենեակի մի բաժինը Գէպի Մարսեան դաշտի
գլխաւոր շինութիւնը՝ «Palais des Industries di-
verses» (Արդիւնագործութիւնների պալատը)
տանում են երկու ուրիշ, միմեանց գոտեջնաց,
պալատներ. սրանք են՝ Palais des beaux-arts
(Գեղարուեստների պալատը) և Palais des arts
liberaux (ազատ արհեստների պալատը): Առաջի-
նը պարունակում է իր մէջ քանդակագործու-
թիւնների և պատկերահանդէսների անվերջանա-
լի բաժինները, իսկ երկրորդը գտնւում է այցելուի
ուշադրութիւնը ներկայացնելով նրան մաքի կա-
յին աշխատանքի պատմութիւնը (Exposition
rétrospective du travail): Այդտեղ դուր կը գտնէք
եգիպտական, չինական և հնդկական նախապե-
տական գիտանոցներ, անցեալ դարերի ալքիմի-
կոսների և ֆիզիկոսների արհեստանոցներ, 16-դ
դարի Մովսէս Խաթաբ անունով ուսումնական
առաջին դեղատոնը Պարիզում, ապա՝ աղագոր-
ծի ան պատմութիւնը Չինաստանից սկսած մին-
չև Եւրոպա, երաժշտական գործիքների պատմու-
թիւնը ամենահին դարերից սկսած, տնային ու-
թեան արհեստի պատմութիւնը, բեմական ար-
հեստի յաջորդական զարգացման պատմութիւնը,
ապա փորագրութեան, որսի, ձկնորսութեան, ա-
պակու վրա նկարաւորութեան, ֆոտոգրաֆիայի
պատմութիւնը, բոլորն էլ շօշափելի օրինակներով
ցոյց տուած, և այլն...
Ազատ արհեստների պալատի ետեւի մասի ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

XI

Շարունակում են այցելել Մարսեան դաշտի
վրա գտնվող ցուցահանդիսի բաժինները:
Եթե նրան աշտարակի ձախ կողմը կառուց-
ված է մի մեծ շինութիւն, որը պարունա-
կում է իր մէջ ծխախոտի կառավարչական գոր-
ծարանը: Այդտեղ գտնվում են մի քանի մօզէ-
ներ թէ գործարանների և թէ մեքենաների և մի
քանի կանանց ղեկավարութեամբ գործում են
ծխախոտը կտրող, պապիրոսներ չինող, ծխա-
խոտը փաթեթների մէջ դարձող և փաթեթները
կշռող շոգեշարժ մեքենաները: Պապիրոսներ չի-
նող մեքենան շատ հետաքրքիր է. մեքենայի մի
կողմից մոցնվում է թամբաբեր, իսկ միւս կող-
մից դուրս են գալիս գիւղաները, որոնք լցվելով
ծխախոտով, մեքենայից թափվում են, որպէս
արդէն պատրաստ պապիրոսներ: Հետաքրքիր է
նոյնպէս կշռող մեքենան. մի կին անդադար գը-
ցում է մեքենայի վերի խողովակի մէջ ծխախո-
տի պատրաստ, արդէն բանդըրը կրող փաթեթ-
ներ, մեքենան անմիջապէս կշռում է այդ փա-
թեթները և եթէ օրէնքով պահանջված կշիռ ու-
նեն, մեքենան անմիջապէս մէջոտղի խողովակի
միջոցով դնում է նրանց իր տակ դրված զամբիւ-
ղի մէջ, այն ինչ, եթէ փաթեթը օրէնքով պա-

հանջված կշռող ծանր է՝ կշռող մեքենան անմի-
ջապէս շարժում է փաթեթը դէպի աջ, իսկ եթէ
փաթեթը թեթեւ է օրինական կշռից, մեքենան
շարժում է աջ փաթեթը դէպի ձախ...:

Մարդիկ արդէն այնտեղ են հասնում, որ խ-
լացի մեքենաներ են ստեղծում...:

Ծխախոտի պալլիսիոնից ոչ հեռու գտնվում է
Սելլու Գօրբլին ասված գործարանների արդիւնե-
րի ցուցահանդէսը: Այդտեղ դուր տեսնում էք
նուրբ ձեւապատկեր ամանեղէններ, նուրբ գործ-
ված գորգեր և այլն: Այդտեղ դուր կարող էք
այցելել մի ամբողջ հարուստ բնակարան, իր սարք
ու կարգով, ննջարան, լուսացարան, սալօն, զը-
րասենեակ, սեղանատուն... Այդ բոլոր սենեակ-
ներում դուր կը գտնէք ամենաքեղ կահ-կարասի-
ներ, ամենամուգր գորգեր, գեղեցիկ ամանեղէն-
ներ, իսկ սեղանատան մէջ պատրաստ դրած է
տան և երկու հողու համար մի շքեղ ճաշի-սե-
ղան:

Կարճառօտ կերպով կը յիշեմ նոյն գրուպայի
միւս պալլիսիոնները: Նախ գտնվում է այնտեղ
աղամաններ տաշելու գործարանը, որտեղ ցոյց
է տրված աղամանների տաշելու հին ձևը և
գործողութեան մէջ գտնվող կատարելագործված
մեքենան աղամանները նոր ձևով տաշելու հա-
մար: Պալլիսիոնում, ապակու տակ, հանդէս են
դրված աւելի քան մի միլիոն ֆրանկի արժողու-
թեան զանազան դոյնի և մեծութեան աղաման-
ներ, այստեղ կը տեսնէք մի չորս վերջի բարձ-
րութեան ամբողջապէս աղամաններից չինված
Եթե նրան աշտարակը: Այդ պալլիսիոնի կողմին

բացակայութեան պատճառով, երկրորդն էլ թէ պէտք կ'այտարարուէր, սակայն մի որոշ հետեւեալի չը հասաւ ժողովը բացից յաջորդը, յայտնելով որ մեզ անշուշտ այժմ հարկաւոր է ունենալ երկդասեան ուսումնարան. դրա համար պէտք է Հին-Նախնիկան 2 եկեղեցիներէ դրամագլխից 2,000 թուրքի յատկացնել ուսումնարանին: Պայտլ Նոր եկեղեցու շինութեան հարցին, յաջորդը ասեց, որ եկեղեցին տարիներէ ընթացքում անպատճառ կը կառուցվի, որովհետեւ որքան և ի՞նչ տակաւին ժողովուրդը ձգտում է այդ միտքը իրագործել: Ժողովում կային ամեն դասակարգի մարդիկ, բայց շատ էր այնպիսիներէ թիւը, որոնք զօրով միայն կարելի էր բերել ուսումնարան: Եւ ահա յաջորդի խօսքերից յետոյ իսկոյն սկսվեցան տաք վիճաբանութիւններ ժողովականների մէջ. այստեղում էին շատ տարբեր կարծիքներ, ինչպէս լատիններն ասում են «quot homines tot sententiae» որքան մարդիկ, այնքան կարծիք: Մի երկուսը իրաւացի նկատեցին, որ անցեալ տարի 500 թ. փող էին ստորագրել զանազան մարդիկ ուսումնարանի օգտին, որոնցից և ոչ մէկը չէ կամենում տալ իր խոստացած դրամը: Արդարեւ մեծ անաղնութիւն է խոստանալ մի բան ուսումնարանին և ապա մերժել խոստումը: Բայց պարտաւոր, և պէտք է ասել, որ այդ տեսակ վարմանը սովոր են Հին-Նախնիկանի զանազանները: Ժողովի մէջ կային մի քանի տաքացած կուսակցութիւններ և այդ պատճառով ժողովը շատ աղմկալի էր: Վէճերը մինչև կէս գիշեր կը տեւէին, և շատ աղմուկներ կը լինէին, եթէ նախագահը չը փակէր նիստը: Այսպէս թէ այնպէս աւելորդ չէր լինի, եթէ զպրոցի երկդասեան դարձնելու միտքը իրագործվի և ահա թէ ինչու. քաղաքի երկնքները շուրջը կարող սովորելու, արդէն ստիպված են դուրս գալ ուսումնարանից: Եւ է, եթէ մէկին հայրը վաճառական կամ արհեստագործ է և ահա նա հօր մօտ է օգնում, բայց շատերը որք լինելով և կամ աղքատ ծնողների դասակ, մնում են անգործ և փողոցներում աննպատակ շրջելով սկսում են փչանալ: Իսկ օրիորդները 12—13 տարեկան հասակում աւարտելով միջնասեան ուսումնարանը, մնում են պարտաւոր ծնողների տանը նստած. չէ անցնում կէս կամ մի տարի, նրանց տալիս են մարդու, այնպէս որ 14 տարեկան օրիորդը դառնում է կին, զուրկ լինելով որ և է մտաւոր դարգացումից: Այսպիսի ամենաաւարական ուսումով կիներ, հասկանալի է, ինչպէս պիտի կրթէ իր երեխաներին և որպիսի մայր պիտի դառնայ: Երկդասեան ուսումնարան այժմ շատ մեծ դերակը ունեն, բայց Հին-Նախնիկանին, որ դաւաճական քաղաք է, ամօթ էլ է չունենալ այսպիսի մի զըպրոց: Ի հարկէ, ամենայն դո՞ւր զուրկ կը գայ, եթէ այդ գործի ամսին մտածող, ցաւող լինի: Բայց մենք մեր տեղական կեանքի մէջ թէ՛ ենք տեսնում, — բոլորովին հակառակը. ո՞վ է մտածում զպրոցի առաջադիմութեան և նրա անտե-

նական բարեփոխման վրա— ոչ ոք: Հողարարձութեան անուանական են. ո՞վքեր են այդ հողարարձութեանը — միջոցներն Այստեղ առաջնակարգ մարդիկ և հասարակաց կարծիքի ղեկավարները համարվում են զանազան միջոցներ և նոյն իսկ չափ չեն և, որոնք լաւ ուսել են հաճախեալու արհեստը, թող փչելով միամիտ մարդկանց աչքերին: Այդ տեսակները ամեն հաջողամանքից և զէպրոց օգուտ են քաղում: Բայց յարգը բարձրացնելու ամբոյսի առաջ, Հասկանալի է այժմ, որ եթէ մի հասարակութիւն, որի ղեկավարները միջոցներն են, ինչպիսի որոշմանը զրուկեան և անշարժութեան դատապարտված պիտի լինի նա ժողովում ներկայ լինելուց յետոյ, մենք եկանք այն եզրակացութեան, որ մեր ուսումնարանը և եկեղեցին այնպիսի հիմնարկութիւններ չարքեն են պատկանում, որոնց վրա շատ չափով մարդիկ «այք են տնկում» մի որ և է նիւթական օգուտ ստանալու համար. ուսումնարանի և եկեղեցու փողերը առնում են տնկողով, տասնհալ տարիներ պահում են իրանց մօտ և ոչ ոք չէ իմանում թէ ո՞ր մնացին, որովհետեւ ոչ տնկողն է ստացվում և ոչ մայր դուստրը: Մենք ղեմ չենք, որ եկեղեցին իր փողերը չահեցնի, միայն հարկաւոր է, որ ամեն տարի հաշիւ տեսնվի և վերահսկողութիւն լինի: Ուրիշ կերպ ոչ զպրոցը, և ոչ էլ մի օրիշ հիմնարկութիւն չեն ծաղկի և առաջ չեն զնայ:

ՆԱԽՈՒՆ ԼՈՒՐՆՈՒ

«Մշակի» հետեւալ № 80 տօնիկի պատճառով երեքշաբթի օր, յուլիսի 18-ին չի հրատարակվի, այլ կը հրատարակվի հինգշաբթի օր, յուլիսի 20-ին:

Կ. Պօլսից, Իզմիրեան կտակի հարծագիր: Մնացած Գանձաւորութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւալ. «Ըստ կտակի բարեխիշատակ Թովմա-Փայ Իզմիրեան» հարծագիր: Մնացած Գանձաւորութիւնը պատիւ ունի հրապարակել այն հեղինակները ու բանասէրներն որ Աղգային զպրոցի մասն և պատմութեան վերաբերեալ ու է աշխատութեամբ կը փախաբան մասնակցի Սահակ Մեսրոպեան զրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յուլիսի 1890 տարու Գոշնիկի վերջ, առ ամեն Սրբազան Պատրիարք Հայրն, Գանձաւորութիւնը հասցէին, ի Պատրիարքարանի հայոց, Կ. Պօլսի:

Ժընեվից մեզ ուղարկված է հետեւալ փոքրիկ նկատողութիւնը տպագրելու համար. «Տեղեկացնալը այստեղ, որ Բարդուղիմէոսի շէնքը հնազաւորութեանը ընկերութիւնն է. այդ ուրախալի է: Մենք թող ենք տալիս մեզ առաջադիմութեանը կազմող յարգելի կանանց, որ ընկերութեան զլիսաւոր նպատակներից մէկը դարձ-

նեն օգնել օրիորդներին բարձրագոյն ուսումը ըստանալու, որով մեծ ծառայութիւն արած կը լինեն հայ իդական սեռի առաջադիմութեանը: Եթէ դա ընկերութեան առաջին նպատակներից մէկը լինի, անկասկած ընկերութիւնը անհրաժեշտ մի հիմնարկութիւն կարող է դառնալ: Նպատակ և օրիորդներին բարձրագոյն ուսում ստանալ, դա ամեն մի իդական ընկերութեան ամենալաւ գործը կը լինի, քանի որ նիւթական միջոցների պակասութիւնը ամենամեծ արգելքներից մէկն է, որի շնորհով մեր կանայք բարձր ուսման չեն կարողանում զիմել: Մենք աւելորդ չը համարեցինք հեռու ժընեվից այս կէտի վրա հրապարակել նորակազմ ընկերութեան ուղարկութիւնը»

ՇՈՒՇՈՒՑ մեզ դրում են. «Վերջին ժամանակներս Շուշու ընկերական զպրոցի շինութեան խնդիրը շատերին է դարձեցնում. կան կարծողներ, որ ընկերական զպրոցը, չունենալով սեփական շինութիւն, տան վրա՞ տարեկան տալիս է 5,000 թուրքի և որ կարելի է այդ 5,000 թ. դուստրով նորոգել նախկին բանտը և տեղափոխել այնտեղ: Նախ՝ զպրոցը 10 տարով վարձելով շինութիւնը, պէտք է վճարէ 25,000 թուրքի, հետեւաբար տարեկան 2,500 թ. և ոչ թէ 5,000 թ.: Երկրորդ՝ միամտութիւն է կարծել, թէ 5,000 թուրքով կը նորոգվի մի այնպիսի շինութիւն, ինչպիսին է նախկին բանտը: Գոյրոցի՝ շինութեան համար հարկաւոր է մօտ 100,000 թ. դուստր: Խօսելով ընկերական զպրոցի շինութեան մասին, այստեղ աւելորդ չենք համարում մի նկատողութիւն անել. պ. Առաքելեանի Շուշուց դրած նախակառուցի, որ տպվել է «Մշակի» 67-որդ համարում: Նա ասում է. «մի պարոն խոստացել է նախկին բանտի տեղը մի քաղաքային հիւանդանոց հիմնել, ուստի այդ պարոնին առաջարկելով հիւանդանոցի փոխարինումը, ճանաչելով Շուշու և շուշեցիներին, հաղիւ կը լինեն 5—6 հիւանդանոց, — յանձն առնել զպրոցի շինութեան ծախքը, կէսը, այսինքն 50,000 թ., և այն ժամանակ, միւս կէսն էլ Շուշին տալով, զպրոցը սեփական շինութիւն կունենայ, ուրեմն զպրոցը կը մնայ Շուշու: Նախ՝ թէ զպրոցի սեփական շինութիւն ունենալը շատ կարեւոր է, որովհետեւ ճիշդ է նկատած թէ զպրոցի գոյութիւնը Շուշու կրկնված է սեփական շինութիւն ունենալուց, բայց այնու ամենայն հիւանդանոցն էլ է շատ կարեւոր, և այդ հիւանդանոցում ոչ թէ կը լինեն հաղի 5—6 հիւանդ, այլ կարող ենք համարձակ ասել, 30—50 հիւանդ: Շուշին կարօտութիւն է զգում հիւանդանոցի: Ի դուրս են կարծում, թէ հիւանդանոցը իր նպատակին չի հասնի: Երկրորդ՝ բարերար պարոնը երբէք չի համաձայնի 50,000 թ. հաղիւն դուստրը տալ, որ զպրոցի համար շինութիւն չլինեն իսկ ինչ որ վերաբերում է նրան, որ պարոնը կամենում է նախկին բանտի տեղ հիւանդանոց հիմնել համեմատաբար շատ փոքր գումարով, այդ դեռ մի խոստում է, որի

իրագործելուն պէտք է սպասել, և զուցէ երկար սպասել, որովհետեւ մեր բարեգործները սիրում են խոստանալ և երկար ժամանակ չը կատարել իրանց խոստումը. ցանկալի է, որ այս անգամ այդ սովորութիւնը չը կրկնվի. ինչպէս և ցանկալի է, որ իրանք շուշեցիները օր առաջ հոգան զպրոցի շինութեան մասին, առանց յոյս դնելու մասնաւոր մարդկանց վրա»:

Թաւրիզից հայ-աւետարանականների զպրոցի ուսուցիչ Մ. Տէր-Ասատուրեանց խնդրում է մեզ տպագրել հետեւալ. «Մի քանի անգամ արդէն պատահել է «Մշակի» մէջ Թաւրիզի բողոքականների զպրոցների մասին զանազան լուրեր կարդալ: Այս օրերս դարձեալ այստեղից մի նամակ լոյս տեսաւ «Մշակի» № 65-ի մէջ: Հարկաւոր ենք համարում այդ առիթով մի քանի խօսք ասելու: Մեր ուսումնարանում հայոց լեզուի դասագրքեր ծառայում են Ն. Տէր-Գևորգեանի «Մայրենի լեզուն» և ոչ թէ Աստուածաշունչը, ինչպէս ասում է պ. Վ. դործ ենք ասում նոյնպէս Յ. Նպաստեանի «Մայրենի հատուածները»: Գրաբարի համար դործ են ամբողջ Յ. Կոստանեանի «Մայրենի» և Երիշ դասագրքեր: Մեր խօսքերի վրա կատարողները կարող են զիմել թէ Թիֆլիսի կենտրոնական զրաւագործողներն և թէ Թաւրիզում՝ Էմիրի քաղաքապետարանում պտնվող մեր գործարարութիւնը և տեսնել ու իմանալ, թէ ինչպիսի գրքեր են դործածվում: Այս տարի մեր ուսումնարանից 7 ընթացաւարտներ դուրս եկան, որոնց մէջ կային աշակերտներ Սալմաստից, Ուրմիից, Մարաղայից, և մինչև անգամ Գանձակից: Այս աշակերտները շինութեան ժամանակ արած ճառարօտութիւններով նոյն իսկ հայ-աւետարանական հանդիսականների ծախհարութիւններին արժանացան: Աւելորդ չենք համարում և մեր զպրոցի ծրագրի մէջ մտած առարկաներից մի բանիսը յիշել: Աւանդում են կրօնագիտութեան մի քանի ճիւղեր իրանց աշխարհագրութեամբ, հայոց, թուրքաց, պարսից, արաբական, անգլիական և ռուսերէն լեզուները, հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, ֆիզիկա, թաքստութիւն, երկրագիտութիւն, աղբերակ և այլն: Այսպիսի ծրագրով ղեկավարվող զպրոցի վարիչը ինչու ուրեմն աշխատում են վայր գցել: Մտած է մեզ աւելացնել, որ մենք աշակերտներ հաւաքելու համար երբէք մուրացկանութեան չենք դիմում, ինչպէս հաւատացնում են օրիորդները»:

Թիֆլիսաբնակ մի կին, ինչպէս հաղորդում է «Новое Обозрение» լրագրից, զիմել է կառավարութեանը, թղթաւորութեան խնդրելով Թիֆլիսում մի ամենօրեայ լրագրի հրատարակելու: Այդ անսակ լուրեր վերջին ժամանակներս այնքան յաճախ են սկսել կրկնվել, որ հաւանականաբար

կիւնում զետեղված են Հոլանդիայի, Բելգիայի և Շվեյցարիայի արհեստների բաժինները, իսկ պատի ետեւի պատից դուրս գտնվում են հարաւային Ամերիկայի մի քանի փոքրիկ երկրներ, ապա Հայտիլի և Հնդկաստանի պալիլիոնները: Գործունակելով նոյն ուղղութեամբ ընթանալով դէպի Միւլթիլի փողոցը, զուրկ կը հանդիպեն Չինական պալիլիոնի, ապա ձեր աջ կողմը կը գտնէ մի բուսական ընկերութիւն, որտեղ մի փոքրիկ բուսական օրկեստր, աղգային զընտանեւոր ածում է աղգային եղանակներ, այնուհետեւ կը անանէ մի բուսաց ի դրա, և վերջապէս կը մտնէ Մարտիոսի ու Եղիպտոսի բաժինները: Այդ վերջին բաժին կայ Կարօ քաղաքի փողոցի նմանութեամբ: Գծած մի ամբողջ փողոց, եղիպտական նոր ձեր (աւելի արաբական ոճով կառուցված) տներով, արեւելեան բազարով, աղգային հագուստը կրող բաղձմիւս արաբներով և ներքինով, որոնք իրանց առջև քշում են սպիտակ էջերին և առաջարկում են ցանկացողներին նստել էջերի վրա և զրօնել: Ուղիղ այդ բաժինների զիմաց, նեղ փողոցի այն կողմ, արդիւնագործութեան պալատի շինութեան մէջ, գտնվում է մի երկայն շարք բաժիններ, որոնք պատկանում են Սան-Մարկո հանրապետութեան, Բուսաստանին, Սերբիային, Եւպոնիային, Սիամին, Եղիպտոսին և Պարսկաստանին:

Ասիական և աֆրիկական երկրների բաժինների մասին ես զիտաւորութիւն չունեմ խօսելու, քանի որ յայտնի է թէ սրանց արդիւնագոր-

ծութիւններն ու ձեւագործները, ինչքան էլ նուրբ և զեղեցիկ լինեն, ինչպէս օրինակ Չինաստանի, Եւպոնիայի և նոյն իսկ Պարսկաստանի արդիւնագործութիւնները, ձեւագործներն ու գործուածները, — բայց նրանք ոչ թէ միայն տարիներից, այլ նոյն իսկ դարերից ի վեր ոչինչ առաջադիմութիւն չեն անում: Նրանք զարթոյթ մնում են նոյն սաշարժ գործիւն մէջ և եթէ զարձակ տան, քան տարուց յետոյ մի որ և է տեղ լինի համաշխարհային ցուցահանդէս՝ չի նակն, եւազմական, պարսկական, եղիպտական արդիւնները, արդիւնագործութիւնները և ձեւագործները՝ ճիշդ նոյնը կը լինեն, ինչ որ էին ներկայ 1889 թի ցուցահանդէսի ժամանակ:

Ուրիշ բան են եւրօպական, մասնաւոր ֆրանսիական արդիւնագործութիւնները. նրանք տարուց տարի, աւելի կասեմ՝ օրից օր չօչալիլի առաջադիմութիւն են գործում և հետզհետէ հասնում են աներեւակային կատարելագործութեան...:

Մտնելը ցուցահանդէսի զլիսաւոր շինութեան մէջ, զանազան արդիւնագործութիւնների պալատ, — կը համոզվենք, որ եւրօպական, մասնաւոր ֆրանսիական արդիւնագործութիւնները այնպիսի կատարելագործութիւն են հասել, որ թղթակցի թղթ զրկել հրաժարվում է նկարագրել այն բոլոր հրաշալիքները, որոնք հանդէս են զրկած ցուցահանդէսում: Մտնել յաջորդաբար՝ ուրեմն և արձակելու առարկաների, ակնեղենների, ձեւապալկու առարկաների, կահ-կարասիների,

զորգերի, ժամացոյցների, պատառների, անուշանոցների, բրօնզեայ իրերի, վառարանների բաժինները, կամ մարդկանց և կանանց հագուստների, կօշիկների, զանաւորների, արուեստական ծաղիկների, ապակեղենների, մետաքսեղենների և բրդեղենների, զէնքերի, երաժշտական այլ և այլ գործիքների, զիմարների արդիւնքների, այլ և այլ կապքերի բաժինները, — և զուրկ կը համոզվէք, որ այդ բոլոր արդիւնագործութիւնները այնպիսի աներեւակային առաջադիմութիւն են արել և այնպիսի նուրբ կատարելագործութեան են հասել, որ տեսնողը կատարելապէս աւելած և հիացած է մնում...:

Երբեք հրաշալիքներից գոնէ մի քանիները. ձեւապալկու վրա նկարներ, որոնք առաջին հայեցողից կարելի է ընդունել իշխանների տեղ, նուրբ փայտագործութիւն և արանքի փողոցներ թիւն փայտի վրա, աներեւակային շքեղութեան ու նրբութեան հասցրած կահ-կարասիներ, ջըն-ըրշ կերպաններ ու գորգեր, որոնք աղողութեամբ մրցում են յայտնի գորգեղենների գորգերի հետ, նրբութեամբ ակնեղեններ, որոնք անկարելի է ջոկել իսկականներից, արուեստական ծաղիկներ մետաքսից, ձեւապալկուց և թղթից, որոնց դուք ակամա մտնում էք հոտ քաշելու համար, չը հաւատալով, որ դրանք կարող են իսկական ծաղիկներ չը լինել, այնպիսի նուրբ և ջընդշ զանաւորներ, որ նրանցից մի անգին կտորը կարելի է այնպէս ծաղել, որ դա կը դարձի մի ամառնոցի մէջ, առաւապական լինելութեանը

հասցրած կանանց յարդեայ զլիսարկներ, զապի միջոցով տաքացող ութներ, բլիլարդի սեղաններ, որոնք մի ակնթարթում մի յայտնի մեխանիզմի միջոցով դառնում են ճաշելու համար սեղաններ, բրօնզեան նորագիտ մետապական զանաւորացի շինված իրեր, կիսաքաղաքներ և անցիկ արձաններ, աներեւակային նրբութեանը հասցրած ակնեղեն առարկաներ, կահ-ըրշ շինված չը ներկված, կամ սպիտակ ներկված և ալեբաստրի և նոյն իսկ մարմարի հետ մրցող իրեր, արուեստական, առանձին զանաւորացի պատրաստած ամենազեղեցիկ մարմարի, ձեւապալկու վրա նուրբ և անջնջելի լուսանկարներ, որանքի իրերը և ապակեղեններ, ի միջի այլոց մի անաղնի ասպիկ, որի մակերևոյթը հաւասար է մօտ 34 քառակուսի մետրի և մի հայելի, որի մակերևոյթը հաւասար է մօտ 35 քառակուսի մետրի...:

Վերջապէս որ մէկն ասեմ, կամ որ մէկը պատմեմ...:

Այցելու հասարակութիւնը ամեն տեղ խոնդրված է, բայց, ի հարկէ, կանայք և օրիորդներ ամենից շատ խմբվում են կանանց զընտանների, ակնեղենների և անուշանոցների բաժիններում:

Արդիւնագործութիւնների պալատում, բացի ֆրանսիական արդիւնագործութիւններից և ձեւագործներից կան հետեւալ երկրների բաժինները՝ Անգլիան, իր աւստրալիական կօշիկայով, Բելգիան, Գանիան, Հոլանդիան և Աւստրո-Ուն-

վերջին լուրն էլ իր նախորդներին լիճակին կեն-
թարկվի և կը մնայ միմիայն իբրև լուր:

Ամառվայ շրջերի հետ միասին, երբ մեծ քա-
նակութեամբ մարդիկ դիմում են կուրի ջրի օգ-
նութեանը մի փոքր զուլանալու համար,—սեղդ-
վողները թիւը օրից օր շատանում է: Համարեա
ամեն օր խեղդամահ լինելու զէպքեր են լինում,
և զորանք էլ զլիաւորապէս այն պատճառով, որ
լողանալու յարմար և անվտանգ տեղեր չը կան,
և ինչպէս երևում է շուտով չեն էլ լինելու:

Երեւելիք մեզ գրում են. «Մեր նահանգի
զանազան գաւառներից ստացած լուրերը ցոյց
են տալիս, որ այս տարի ցորենի և բամբակի
բերքը շատ բաւարար կը լինի. յոյս կայ, որ Ժո-
ղովուրդը վերջին տարիների ընթացքում կրած
նեղութիւններից այդ երկու կարևոր բերքեր
առատութեան շնորհով մի փոքր աղատ շունչ
քաշի: Երևանումն էլ այս տարի պտուղների մեծ
առատութիւն է, միայն խաղողի բերքը լաւ չէ
երևում»:

Մեզ գրում են Ի. Գ. Ի. Ի. Ի. «Ժողովուրդը նորից
տաքնապի մէջ է ընկել. անցնալ տարիները
մարդ ազգային (բորենի) Սուրմալույ մօտ 40
երկնայ կերպ և մեծ սարսափ զցցեց Ժողովուրդին
մէջ: Քանի մի տարի է արդէն այսպիսի զէպքեր
չէին պատահել, բայց մի քանի օր առաջ Գիւլ-
լազ գիւղում գայլը տարել է երկու տարեկան
մի երեխայի: Ժողովուրդը կարծում է, որ դա
նոյն մարդ ազգային բից պիտի լինի, և եր-
կիւզ են կրում, որ չը լինի թէ երեխաները գո-
հեքը նորից շատանան»:

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ
առհասարակ մինչև այժմ կովկասեան ցուցա-
հանդիսին մասնակցել ցանկացողների՝ էկսպո-
նէտների թիւը շատ սահմանափակ է: Դրա զը-
խաւոր պատճառներից մէկը, ինչպէս երևում է,
այն է, որ գաւառներում և գիւղերում տեղական
ազգայնականութիւնը մինչև այժմ էլ ճիշդ և մաս-
րամասն տեղեկութիւն չունի թէ ցուցահանդիսին
նիւթեր ուղարկելու համար ում պէտք է դիմել,
որտեղ և ինչպէս, և կամ թէ այն մարդիկ, որոնց
պէտք է դիմել, իրանց զիջում մատչելի չեն:
Հարկաւոր է որ ցուցահանդիսի կարգադրիչ յանձ-
նաժողովը լուրջ ուշադրութիւն դարձնէր այդ
հանգամանքի վրա, որը կարող է մեծ վնաս տալ
ցուցահանդիսին, որ միանգամայն ցանկալի չէ,
և օր առաջ դիմել 'և այնպիսի մարդկանց միջ-
նորդութեանը, որոնք Ժողովուրդին աւելի մօտ
են, և աւելի օգտակար կարող են լինել այդ
գործում:

Ֆրանսիացի գրող Երնէստ Լեգուվէի մի յայտ-
նի աշխատութիւնը, այն է «Կանանց բարոյական
պատմութիւնը» որ շատ տպագրութեամբ արդէն

լոյս է տեսել, այս օրերս Կ. Պոլսում հրատարակ-
վել է՝ հանգուցեալ տիկին Քաղաւի Զիմանեան-
Մէլիք-Աղաբաշի հայերէն թարգմանութեամբ: Այդ
բաւական մեծ աշխատութեան մէջ հեղինակը շօշա-
փում է կանանց խնդիրը և կնոջ դաստիարակու-
թեան և կենսի շատ կողմերը, խօսելով կնոջ
մանկութեան, մանկական դաստիարակութեան,
երիտասարդութեան, սիրոյ, ամուսնութեան, կը-
նոջ և մարդու յարաբերութեան, ապահարգանքի,
կնոջ իրաւունքների և վերջապէս կնոջ՝ իբրև մօր
մասին,—այսինքն մի շարք այնպիսի հարցերի
մասին, որոնք այժմ էլ կենդանի նշանակութիւն
ունեն կանանց կեանքի մէջ: Այդ թարգմանու-
թեանը կցած է թարգմանչուհու հօր՝ հանգու-
ցեալ գրող Երեմիայի մի առաջաբանը, որից, ի-
միջի այլոց երևում է, որ հանգուցեալին է պատ-
կանում գրել թարգմանութեան արագութիւնը,
որով և մասամբ պարզուած է թէ ինչու գրել մէջ
աչքի է ընկնում լեզուի այն խրթնութիւնը, որը
յատուկ էր ոչ միայն «Թորոս Լեւոնի» հեղինա-
կին, ուրեմն և նրա անմիջական ազդեցութեան
նեղքը ուսած թարգմանչուհուն, այլ և Պոլսի այն
բոլոր թարգմանիչներին, որոնք յանձն են առ-
նում հայերէնի վերածել մի օր և է օտար լուրջ
աշխատութիւն: Մօտ 500 երեսից բաղկացած
այդ յայտնի գրքի թարգմանութեամբ հանգուցեալ
տիկին Քաղաւի Մէլիք-Աղաբաշին անկասկած մի
գնահատելի լուում է գցել Կ. Պոլսի հայոց թար-
մանական գրականութեան մէջ: Երեւոյ լիզու-
վի յայտնած մտքերը ընդհանրապէս համակրելի
են, և ևս թէ գրքի մէջ կան մի քանի կէտեր, ո-
րոնք հնարացած կարող են համարվել, այդ պէտք
է բացատրել միայն նրանով, որ վերջին քաղաք
դարու ընթացքում կանանց հարցին վերաբերեալ
մի քանի կարծիքները կերպարանափոխվել են:
Այդ թարգմանութեանը, օրի գիրը 1 ր. 50 կօ-
պէլ է նշանակված, կցած է թարգմանչուհու
լուսանկարը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻԶՄԻՐԱՆ ԿՏԱԿԻ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇՈՒԹԵԱՆ
ՀԱՆԴԵՍԸ

Ներկայ թվի յունիսի 29-ին Կ. Պոլսում կա-
տարվել է իշմիրեանի կտակի գրական մրցանա-
կարաշխութեան հանդէսը. մրցանակը, ինչպէս
արդէն առիթ ունեցանք հաղորդելու, տառցել է
պ. Գալուստ Զիմանեանին իր «Նիւթեր ազգա-
յին պատմութեան համար» աշխատութեամբ:
Այժմ կտակի գործադիր յանձնաժողովը ուղար-
կել է այդ մասին մանրամասնութիւններ, որոնք
տպագրված են Կ. Պոլսի լրագրիւրներում, որոնցից
և աւելորդ չենք համարում մի քանի քաղաքա-
նեւ անել:

«Ազգային խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ
յունիսի 29-ին իշմիրեանի կտակի մրցանակա-

բաշխութեան Գ. Հանդէս, ընդ նախագահու-
թեամբ Պատրիարք Զօր Ներկայ էին՝ խորհեան
Հայրիկ, Սիֆերեան, Ալէքսան, Օրմանեան և
Սուրանձտեանց Սրբազաններն, և ուրիշ հոգեւորա-
կանք, կտակի գործադիր Յանձնաժողովի ան-
դամները, նաև բաւական հանդիսականք: Հանդէսն
սկսու ժամը 4 1/2-ին Ատենադպիր Հայրը կար-
գաց այս տարւոյ Տեղեկագիրը: Երբ վերջացաւ
տեղեկագիրն ընթերցումը, հանդիսականք ջերմ
ծափահարութեամբ ողջունեցին օրուան պատկե-
ւոյն, Պ. Գալուստ Զիմանեանին անունը: Այ-
նուհետև, Պատրիարք Հայրն հակիրճ բաց յուզիչ
առնաբանութեամբ դրուատեց հանգուցեալ իշ-
միրեանի յիշատակը և վերջացրեց իր ճառը ա-
սելով. «այսօր ամէն բերան խղճիւրանց կօրհնէ-
կարինքն կը հասնին աղքատիկ աղջկանց շնորհա-
կալու օրհնութեանց ձայնները, զբաղեցնեն ու
գրասերներն իրենց գոհունակութիւնը կը յայտ-
նեն. Հայ Ժողովուրդն ամէն տարի խղճիւրանցի
անունը կը հնչէ որոշուալ օրեր, իսկ ամէն օր չը
մոռնար դնալ Նիւթերը զուտ բարեգործու-
թեան տեսիլ բաւական չըլլար զղրելու մեր հա-
րուստները կտակ մը թողուլ իրենց աղքին, ոչ
ապաքէն խղճիւրանցի այս լուսապսակ փառքը
կարող է զիրենք ալ շարժել անոր հետեւող լինե-
լուն»:

Սրբազան Պատրիարք Զօր խօսքերը խորին
տպաւորութիւն թողուցին. ապա Հայրիկ խօսե-
ցաւ Գրուատեց Յանձնաժողովի աշխատութիւն-
ները, սակայն, յարեց, պատուոյ խնդիր մը կայ:
Ինչ կընէ Յանձնաժողովը. հաւատարմ տնտեսի
մը դերը կը կատարէ. իր գրասեղանի վրայ ըս-
տակ մը կայ, կը բաշխէ. բայց միթէ աւելի պա-
տիւ չի ուրիշ միջոց ալ գտնել, ճարել ճարճիկ
և բաշխել. միայն եղածը չը գործածել այլ նաև
ստեղծել: Եւ Հայրիկ առաջարկեց որ իշմիրեանի
կտակի Յանձնաժողովը նոր պաշտօն ալ ստան-
նէ. իր գործունէութեան շրջանակն ընդլայնէ,
աղքէն զրա՛մ հաւաքէ և քաջաբեւե այնպիսի գրա-
կան աշխատութիւններ որ չեն մտնել իշմիրեան-
ցի կտակի շրջանակին մէջ: Առաջարկեց որ Պատ-
րիարք Հայրն ստորագրողներու գլուխն ըլլայ,
ապա ինք ստորագրէ, և այսպէս շարունակուի
Հայրիկին առաջնորդ ընդհանուր հաւանութիւն
գտաւ: Տիգրան էֆ. Ետեմաթեան կարծիք յայտ-
նեց թէ իշմիրեանի կտակը պատմական, հա-
գիտական աշխատութիւնները կը քաջաբեւե, հի-
տաբար քաջաշխարհութեան կարօտ են այժմ ուրիշ
նիւթեր, որպիսիք են գիտական, դասական աշ-
խատութիւնները Թովմաս էֆ. Թէրզեան համա-
կարծիք լինելով մասնաւորապէս ծանրացաւ այն
կէտին վրայ թէ դասագրքերու խնդիրը լքեալ է.
ամէն հեղինակ դասագրքը մը կը յօրինէ և վար-
ժարաններու մէջ ամէն կարգի դասագրքեր մուտք
կը գտնեն, մինչդեռ միօրինակ դասագրքերու
շարք մը նախապատու պէտք է համարվի, և
փափաք յայտնեց որ եթէ Յանձնաժողովը նոր
պաշտօն ստաննէ, դասագրքերու հեղինակները

քաջաբեւե իւր գլխաւոր նպատակն ըլլայ: Մի-
նաս էֆ. Չերազ հակակարծիք գտնուեցաւ նա-
խորդ առնաբաններուն. դասագրքերու հեղինակ-
ներն, ըսաւ, ամէնէն աւելի քաջաբեւեաներն են.
ամէն դասագիրք հաղարաւոր օրինակներով կը
սպառի և անոնց հեղինակներն իրենց աշխատու-
թեանց մասին զղջալու պատճառ մը չունին.
ընդհակառակը: Ուրեմն ինչ հարկ, ինչ պէտք
նորանոր քաջաբեւութեան անոնց օրը արդէն
քաջաբեւեալ են, մինչդեռ անոնք բուն գրական
աշխատութիւնները բոլորովին մոռացութեան կը
տրուին. զուտ գրական աշխատութիւն մը ամե-
նամեծ աշխատութիւն կը պահանջէ, Ժողովուրդի
մը սրտին, մտքին, բարբերուն, աղղութեան վրայ
հօր աղղեցութիւն կունենայ և ոսկալն այդպիսի
գրական գործերու վրայ չենք ուզեր մտածել,
ինչու, վասն զի դեղեցիկ դպրութեանց կը պատ-
կանին, և դեղեցիկ դպրութիւնները գուցէ չուայ-
լովիւն համարուին: Եւ Չերազ էֆ. կարակալեց
թէ Յանձնաժողովը եթէ Հայրիկի առաջարկած
գործադիր մարմնայն կերպարանքն առնու, իւր
առաջին նպատակն ըլլայ զուտ գրական գործոց
քաջաբեւութիւն: Պ. Դահլամեանց համակարծիք
գտնուեցաւ Չերազ էֆ.-ի, աւելցնելով թէ գեղե-
ցիկ դպրութեանց հետ միասին գեղարուեստներն
ալ քաջաբեւե Յանձնաժողովոյ պարտականու-
թիւնն է:

Չանազան կարծիքները լսուելէ յետոյ փափաք
յայտնուեցաւ որ Պատրիարք Հայրը զուլու կան-
գնի և Հայրիկի առաջարկը գործնական ընելու
միջոցներուն վրայ խորի և զայնս ի գործ դնէ:
Պատրիարք Հայրն հանձնաւ խոտախալ այս յայտ-
նուած փափաքներն իրագործել:

Հանդիսականք մեկնեցան գոհ և ուրախ այս
գրական հանդէսէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐՈՒ

—Վիեննայից գրում են, որ Միւլան նախկին
թագաւորը Պարիզ գնալով, իր հետ մտադրու-
թիւն ունի տանելու իր որդուն ևս: Միւլան յայտ-
նել է, որ այդ բանին ոչինչ քաղաքական նշա-
նակութիւն չը պէտք է տալ:

—Սերբիական կառավարութիւնը պաշտօնա-
պէս յայտարարել է արտասահմանի իր ներկայա-
ցուցիչները միջոցով, որ վերին աստիճանի չա-
փազանցեալ են այն լուրերը, որոնք վերաբե-
րում են Սերբիայում երևցած աւազակային
խմբերին, աւելացնելով, որ սուտ են նմանապէս
և այն լուրերը, որ իբրև թէ այդ աւազակային
խմբերը քաղաքական նպատակներն ունեն:

—Հռոմից նոր լուր են հաղորդում, որ պապը ի-
րան և իր աթոռին պատկանող բոլոր գումարնե-
րը տեղափոխել է օտար բանկերը: Մինչև այժմ
այդ գումարները պահպանուած էին իտալական
բանկերում: Այդպիսով ուրեմն օրից օր աւելի է

գարիան, իսկ միւս կողմում՝ խառնան, Շիլլիցա-
րիան, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նա-
հանգները, Սպանիան, Պորտուգալիան, Բուլի-
նիան, Նորվեգիան և Ռուսաստանը: Պէտք է խոս-
տովանվել որ Ռուսաստանի մանուֆակտուրայի
բաժինը անհամեմատ աւելի հարուստ է և իսկ
կաղնիկերպով է, քան թէ նոյն երկրի միւս
բաժինները, որինսկ սնունդի առաքականների և
բնական արդիւնքների բաժինը, որը, ինչպէս նա-
խորդ թղթակցութիւններումս ասեցին, շատ աղ-
քատ է: Արդիւնաբերութիւնների ներկայացուցիչ-
ները (էկսպոնէտները) ուստաց բաժնում, կրում
են, սակայն, ոչ բուն ուստաց ազգանուններ, այլ
մեծ մասամբ գերմանական և հրէական ազգա-
նուններ: Երեւելիք ներսի կողմից, այսինքն
պատարանի և ֆոնտանների դիմաց, գտնվում են
սաբոդը տարածութեան վրա այլ և այլ ազգու-
թիւններին պատկանող հետեւալ ընտրութիւններ
հօլանդական, ֆրանսիական, շիլլիցական,
անգլիական, ամերիկական և ուստաց ընտրութե-
անի հրէայ է, որը քանի մի տարի շարունակ կա-
ցել է Պետերբուրգում և այնտեղ ֆրանսիացի էր
համարվում, իսկ այստեղ, ցուցահանդիսում, սա-
բոդը շքեղ ընտրութեան, ձեռք բերած լինելով մի
սա մօլար, Պետերբուրգից իր հետ բերած լի-
նելով երկու ռուս խոսարարներ, նա զրել է տա-
լիս իր կերակուրների ցուցակի վրա koulibiaka,
chichlik և այլ այդ տեսակ կերակուրների անուն-
ներ և ռուս այցելողներին հանդիպում է «մայո

պօչտէնի» և «օչեն կարոչ» բառերով... իսկ
ձեռնաքննութեան ընթացքում, ի հարկէ, բո-
լորն էլ ֆրանսիացիք են... Բնատրանի բերօթի
մօտ նստած է մի հրաշալի գեղեցիկ աղջիկ, որը
իր աննման գեղեցկութեամբ բոլորի ուշադրու-
թիւնն է գրավում. նա տիրող ազգականութիւն է,
Պարիզի մի հրէուհ, որը մի մի անգամ հաջում
է ուստաց աղքային զգեստը, և, ի հարկէ, ուստե-
րէն այնքան դիտէ, որքան ևս չինարէն... Բայց
պէտք է խոստովանվել, որ թէյը այդ ընտրութե-
անում շատ լաւ է և իսկական ուստաց թէյ է:
Ընդհանրապէս խօսելով բոլոր աղքերի արդիւ-
նագործութիւնների բաժինների մասին, չէ կարե-
լի չը խոստովանվել, որ արդիւնագործութիւննե-
րից շատերում Անգլիան գերազանցում է ուրիշ-
ներին, օրինակ, երկաթնայ և պողպատնայ
(ՇԵՏԱՆ) իրեղէններում, Բելգիան գերազանցում է
ամենքից նուրբ դանտէների պատրաստութեան
կողմից, և այլն... Այդպիսով երկրներին մեծ
մասը մի օր և է արդիւնագործութիւնն ունի, որ
հնուց, աւանդական կերպով պատրաստելով գե-
րազանցում է ուրիշներին նոյնանման արդիւնա-
գործութիւնները: Բայց առհասարակ, ընդհա-
նուր համոզմունք է, որ արդիւնագործութիւննե-
րի մեծամասնութեան վերաբերմամբ, նրանց նը-
րուցումը, կատարելագործութեան, ճաշակի, յար-
մարութեան, արժանաւորութեան, արժութեան
կողմից,—ներկայ տարվայ ցուցահանդիսում Ֆը-
րանսիան բոլորի վրա փայլուն յաղթանակ է
տարել:

Ֆրանսիան յաղթանակ է տարել ոչ թէ մի-
այն մանուֆակտուրային արդիւնագործութիւննե-
րի կատարելութեան կողմից, բայց և տխրա-
կան մասում և մանաւանդ գեղարուեստների և
ճարտարապետութեան կողմից: Արդիւնագործու-
թիւնների պալատի շինութիւնը և մասնաւանդ
շինութեան զլխաւոր մուտքը իր աննման ճար-
տարապետութեան կողմից՝ կարող է վստահու-
թեամբ տալ և իններորդ դարի ճարտարապե-
տութեան հրաշալիքներից մին համարվել: Սուտ-
քի գմբէթը իր վերակառուութեամբ կարող է մրցել Էյ-
ֆէլեան աշտարակի վեր ճարտարապետութեան
հետ խոստովանվում ևս որ գրիչ անկարող է
նկարագրել այն տպաւորութիւնը, այն հիացումը,
այն դարմանքը և զմայլումը, որ առաջին ան-
գամ գործում է մարդու վրա աներեւակայելի
բարձրութեան, ամբողջութեամբ երկաթից շին-
ված և մոյգ գեղին ապակիներով ծածկված այդ
վեր գմբէթի տեսքը... Առանց չափազանցնելու
կարող ևս ասել, որ այցելուն բերանը բաց, ապ-
չած, կարծես մեխած է մնում մի տեղի վրա,
աչքերը ուղղված դէպի վեր և երկար ժամանակ
ոյժ, կարողութիւն չունի տեղից հեռանալու...
Այն, ճարտարապետութեան համարձակութեան,
հարուստ կոնցլիպայի և մի և նոյն ժամանակ
ճաշակի և նրբութեան կողմից իրագործման մէջ,
—ֆրանսիացիք անմասն են և մրցող չունեն աշ-
խարհիս երեսին...
Այդ ահալին, ապակեայ գմբէթի վրա կանգ-
նեցած է Դըլապլանշ քանդակագործի շինած

չորս մետր բարձրութիւն ունեցող Ֆրանսիայի
արձանը, որը ամեն երկրների էկսպոնէտներին
պարգևներ է բաժանում, իսկ մուտքի գլխաւոր
դուռը 30 մետր բարձրութիւն ունի և գրեթէ
նոյնքան լայնութիւն: Ամբողջ ահագին շինութիւ-
նը ծածկված է ապակեայ առաստաղով, իսկ
մուտքի երկու կողմից կանգնեցած են երկու
հսկայ արձաններ, որոնցից մին առևտուր,
իսկ միւսը արդիւնագործութիւն է ներ-
կայացնում:

Վաղը այցելելու ևս մեք են աների ահագին
պալատը և դարձեալ մի քանի ուրիշ աւելի մա-
նըր պալատներ, — և դրանով պիտի վերջանան
համաշխարհային ցուցահանդիսի իմ այցելութիւն-
ներս:

Երէկ հրաւեր ստացայ, որպէս մամուլի ներկա-
յացուցիչներից մին, մասնակցել և կանանց
կօնգրէսին, որի նախագահն է դարձեալ Ժիւլ
Սիմօն: Ինձանից չուղղեցին վերցնել 10 ֆրանկ
անդամական վճարը և խնդրեցին ինձ նստել մա-
մուլի սեղանի մօտ, նախագահից ոչ հեռու: Ֆը-
րանսիացիներին սիրալիւ վարմունքին չափ ու
սահման չը կայ:

Չեմ կարող, ի դէպ, չը յիշել այստեղ, որ և
Պարիզի հայ կօնօթիայի կողմից, թէ վաճառա-
կանների և թէ ուսանողների կողմից՝ ամենասի-
րալիւ ընդունելութիւն գտայ, որը Պարիզի մէջ
իմ կարճատև կացութեան՝ ամենագեղեցիկ յիշ-
գութիւններից մէկը կը լինի ինձ համար:

Գրիգոր Արծրունի

Типографія Канцелярії Главбоцач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. 523.